# Գիտություն

ՓԵՏՐՎԱՐ
№ 2
(315)
2018 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից


## ՀՀ 4-րդ նախագահի թեկնածու Արմեն ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀՀ ԳԱԱ-ում հանդիպեց գիտնականների հետ

Սույն թվականի հունվարի 30-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ 4-րդ նախագահի թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Արմեն Սարգսյանի հանդիպումը ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների, ՀՀ գիտահետազոտական կառույցների ղեկավարների հետ:

Նա եկել էր լսելու գիտական հանրության սպասելիքների, քաղաքականության, գիտության ոլորտներում ակնկալվող փոփոխությունների մասին՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի (ՀՀԿ-ի կողմից) ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու մասին առաջարկի վերաբերյալ որոշում կայացնելու համար:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանն իր ողջույնի ելույթում շնորհակալություն հայտնեց Արմեն Սարգսյանին, ով իր հանդիպումների ցանկում ընդգրկել է այցելություն գիտությունների ազգային ակադեմիա: «Այսօր գիտության զարգացումը մեր երկրում դժվարությունների է հանդիպել: Մենք անում ենք հնարավորինս, և հույս ունենք, որ առաջադրվելու և ընտրվելու դեպքում Ձեր ուշադրությունը կլինի նաև գիտության զարգացման վրա, որը միշտ եղել է նախկինում», - ասաց Ռադիկ Մարտիրոսյանը:

«21-րդ դարը նոր տեխնոլոգիաների, նոր զարգացած գիտության դար է, և ես հույս ունեմ, որ այդ դարը, որտեղ բնական ռեսուրսների և նավթի պահանջարկը գնալով պակասելու է, այդ դարը մերն է լինելու, և այդտեղ գիտությունների ակադեմիայի և կրթության դերը դառնում է առավել կարևոր: Հավատում եմ, որ գիտությունների ազգային ակադեմիան, համալսարանական կառույցներն ու նաև դպրոցը, այսինքն, կրթությունը և գիտությունը առանցքային են դառնալու մեր ապագայի համար»,- իր ելույթում մասնավորապես ասաց Արմեն Սարգսյանը:

Քննարկման մասնակիցները Արմեն Սարգսյանին ներկայացրեցին գիտության և կրթության ոլորտների զարգացումները, խնդիրները, մարտահրավերները: Խնդիրներից կարևորվեցին գիտության ցածր ֆինանսավորումը, երիտասարդ կադրերի պակասը, անտարբերությունը և հանրապետությունում գիտության դերի և նշանակության անկումը: Խոսվեց նաև ԵԱՏՄ-ԵՄ հետ Հայաստանի համագործակցության շրջանակներում Հայաստանի մեծ շուկա մտնելու հնարավորությունների մասին: Ներկայացվեցին արտագաղթի, առողջապահական, բնապահպանական խնդիրներ:

Արմեն Սարգսյանը շնորհակալություն հայտնեց հանդիպման մասնակիցներին առաջարկությունների և նկատառումների համար և ամփոփիչ խոսքում նշեց, որ իր համոզմամբ մեր երկիրն առաջ են տանելու կրթությունն ու գիտությունը, որ գիտության հենքի վրա պետք է մշակվեն համաշխարհային գիտական տեխնոլոգիական փորձի վրա հիմնված գաղափարներ և, դրանց տալով հայկական մտքի որակը, մատուցել աշխարհին:

## ՄԵԾԱՐՈՒՄ

### ՀՀ ԳԱԱ-ում նշվեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Միչիգանի համալսարանի պրոֆեսոր Գևորգ Բարդակչյանի 75-ամյա հոբելյանը

Սույն թվականի հունվարի 29-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում գիտական հանրությունը մեծ շուքով նշեց ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Օքսֆորդի համալսարանի դոկտոր, Միչիգանի համալսարանի դոկտոր, պրոֆեսոր, բանասեր, պատմաբան, գրականագետ Գևորգ Բարդակչյանի ծննդյան 75-ամյակը:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, բարձր գնահատելով Գևորգ Բարդակչյանի գիտակրթական գործունեությունը, իր շնորհավորական ելույթում մասնավորապես ասաց. «Գևորգ Բարդակչյանը մեր մտավորականության այն ներկայացուցիչն է, ով իր կյանքը նվիրել է գիտակրթական համակարգի զարգացմանը: Սփյուռքում մենք շատ հայագիտական կենտրոններ ունենք, սակայն այդ կենտրոնների մեջ Միչիգանի համալսարանի հայագիտական կենտրոնը, որը ղեկավարում է Գևորգ Բարդակչյանը, ունի կարևոր ակադեմիական դեր ու մակարդակ: Գևորգ Բարդակչյանը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է և Հայաստան այցելությունների ժամանակ մասնակցում է մեր բոլոր հայագիտական գիտաժողովներին՝ տալով այդ գիտաժողովներին բարձր բովանդակություն: Հարգելի հոբելյար, մենք ցանկանում ենք Ձեզ առողջություն, ստեղծագործական հաջողություններ՝ ի փառս մեր կրթության, գիտության, մեր հայրենիքի»:

Գևորգ Բարդակչյանին ուղղված իր շնորհավորական ելույթում ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ասաց. «Ինձ համար, որպես Սփյուռքի պատասխանատուի, մեծագույն շնորհակալության է արժանի Գևորգ Բարդակչյանի գործունեությունը՝ Միչիգանի համալսարանում ղեկավարել հայոց լեզվի ամբիոն, երկար ժամանակ լինել Հայագիտական ընկերակցության ղեկավար: Սա մեծագույն արժեքն է մեր սիրելի հոբելյարի, որովհետև նա կարողացավ հայոց լեզուն, հայոց գրականությունը, հայոց պատմությունը ոչ միայն հայերին, այլ նաև օտարներին փոխանցել, դասավանդել և այս առումով մեծ գործունեություն ծավալել»: Հրանուշ Հակոբյանը հայտնեց, որ հրաման է ստորագրել Գևորգ Բարդակչյանին ՀՀ սփյուռքի նախարարության «Մայրենիի դեսպան» մեդալով պարգևատրելու մասին:

Շնորհավորական ելույթներով և Գևորգ Բարդակչյանի գիտակրթական գործունեության վերաբերյալ դրվատանքի ջերմ խոսքերով հանդես եկան ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրենի պաշտոնակատար Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ պրոռեկտոր Արարատ Մալխասյանը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Վարդան Դևրիկյանը, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, գրականագետ Սամվել Մուրադյանը, գրականագետ, թարգմանիչ Հենրիկ Բախչինյանը, գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը: Ներկաների բարձր գնահատականքին արժանացավ Գևորգ Բարդակչյանի հեղինակած «Պատմաբանասիրական հոդվածներ» գիրքը, որում ի մի են բերվել հեղինակի հայ միջնադարյան և նոր շրջանի մշակույթին, գրականությանը և պատմական հարցերին նվիրված 7 հոդվածների հայերեն թարգմանությունները:

Գևորգ Բարդակչյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին ջերմ բարեմաղթանքների և իր վաստակը գնահատելու համար և որպես հաշվետվություն ներկայացրեց իր ծավալած գործունեության վերաբերյալ մանրամասներ՝ խոստանալով հաջորդ առիթների ժամանակ ներկայացնել իր ապագա գործունեության արդյունքները:

Գևորգ Բարդակչյանը ԱՄՆ-ի Միչիգանի համալսարանի Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության ամբիոնի ղեկավարն է: Մինչ այդ դասախոսել է Հարվարդի համալսարանում: Երկար տարիներ եղել է ԱՄՆ-ի Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության նախագահը:

Գևորգ Բարդակչյանի գիտական գործունեության շրջանակն ընդգրկում է վերջին հազարամյակի գրական-մշակութային-պատմական-լեզվային կյանքը, փոխառությունների մշակութային կոնտեքստը և հայերենի գրական տարբերակների առաջացումը:

Գևորգ Բարդակչյանը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է, Օքսֆորդի համալսարանի հայագիտության և արևելագիտության դոկտոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի պատվավոր դոկտոր:

Գևորգ Բարդակչյանը գիտության և կրթության ոլորտում ներդրած մեծ ավանդի համար 2000 թ.-ին արժանացել է «Արթուր Դադյանի անվան հայկական (մշակութային) ժառանգության մրցանակ»-ի, 2011 թ.-ին՝ Ամերիկայի հայ ուսանողների ասոցիացիայի կողմից Ձեկ Քոլիգյանի անվան հայագիտական մրցանակի, 2011 թ. ստացել է «Էլիս կղզու պատվավոր մեդալ», 2014 թ.-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից պարգևատրվել է «Հակոբ Մեղապարտ» մեդալով:

***ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն***

ԵԶԱԿԻ են այն մարդիկ, ովքեր օժտված լինելով բնածին տաղանդով, կարողանում են իրենց էությունն անմնացորդ նվիրաբերել մարդկության առաջընթացին, ստեղծելով անգնահատելի մնայուն արժեքներ: Այդպիսի վառ անհատականություն էր հայ ժողովրդի մեծագույն զավակ, ականավոր ֆիզիոլոգ, ֆիզիոլոգիական խոշորագույն գիտական դպրոցներից մեկի՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիր, մեծ հայրենասեր, ԽՍՀՄ ԳԱ, ԽՍՀՄ ԲԳԱ և ՀՀ ԳԱ ակադեմիկոս, ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, աշխարհի բազմաթիվ ակադեմիաների իսկական և պատվավոր անդամ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Լևոն Աբգարի Օրբելին:



Լ. Ա. Օրբելու անվան հետ են կապվում համաշխարհային նշանակության հայտնագործություններ: Նրա արտահայտած գիտական մտքերն ու մտահղացումները հիմք են հանդիսացել նոր հետազոտությունների համար: Նա հիմնովին վերակառուցում է մեր պատկերացումները ֆիզիոլոգիական գիտության բազմաթիվ բնագավառներում: Նրա արժանի համբավ վայելող գիտական աշխատանքները մեծ ազդակ են հանդիսացել ռուսական և համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության զարգացման գործում:

ՆՇԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

# ԼԵՎՈՆ ԱԲԳԱՐԻ ՕՐԲԵԼԻ

Պատկառելի մեծության այդ գիտնականի սխրանքը դրսևորվել է ոչ միայն նրա փայլուն գիտական հետազոտություններում և տեսական ընդհանրացումներում, այլ նաև գիտնականի ու մտածողի այն հանճարում, որը վերաբերում է գիտության կազմակերպմանը, գիտական ուժերի միավորմանն ու գիտական կոլեկտիվների նպատակաուղղմանը դեպի ժամանակակից գիտության արմատական խնդիրների լուծմանը:

Լևոն Աբգարի Օրբելին ծնվել է 1882 թ. հուլիսի 7-ն Ծաղկաձորում (Դարաչիչակ), դեղագործի ընտանիքում:

17 տարեկան հասակում Լևոն Օրբելին ոսկե մեդալով ավարտելով Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան, որտեղ ուսումնառել են նաև նրա եղբայրներ Ռուբենն ու Հովսեփը, ուսումը 1899-ից շարունակում է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում, որն էլ ավարտում է 1904-ին: Ավարտելով ուսումնառությունը Օրբելին աշխատանքի է անցնում Բալթիական նավատորմի հոսպիտալում, որպես զինվորական բժիշկ:

Օրբելու ստեղծագործական ուղին սկսվում է 1901 թ., Ի. Պ. Պավլովի լաբորատորիայում, որն այդ տարիներին զբաղեցնում էր ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնը Ս. Պետերբուրգում: Այստեղ, սկսելով իր ստեղծագործական ուղին Ի. Պ. Պավլովի ղեկավարությամբ, նա դառնում է ոչ միայն Պավլովի ամենամտերիմ աշակերտն ու գիտական գործընկերը, այլ նաև, ստեղծելով գիտության մեջ նոր ուղի, դառնում է աշխարհի խոշորագույն ֆիզիոլոգներից մեկը:

Լինելով դեռ ուսանող, Օրբելին կատարում է իր առաջին գիտական աշխատանքը մարսողության ֆիզիոլոգիայի բնագավառում՝ նվիրված պեպսինային գեղձերի համեմատական ուսումնասիրությանը՝ թափառող նյարդի հատումից առաջ և հետո, ինչի համար ռազմաբժշկական ակադեմիան նրան արժանացնում է ոսկե մեդալի, և Օրբելին դառնում է Պավլովի այն աշխատանքների համահեղինակը, որոնց համար աշխարհահռչակ ֆիզիոլոգն արժանանում է Նոբելյան մրցանակի: Ուսման ավարտից հետո Օրբելին շարունակում է գիտական աշխատանքները Ի. Պ. Պավլովի լաբորատորիայում՝ շուրջ 20 տարի մնալով նրա ամենամերձավոր աշխատակիցը Փորձարարական բժշկության ինստիտուտում և ռազմաբժշկական ակադեմիայում:

26 տարեկանում (1908 թ.) Օրբելին պաշտպանելով դոկտորական թեզը բժշկագիտությանը և Ի. Պ. Պավլովի երաշխավորությամբ երկու տարով իր գիտելիքներն է հարստացնում եվրոպական մի շարք երկրների, այդ թվում՝ Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի խոշորագույն ֆիզիոլոգիական գիտական կենտրոններում:

Վերադառնալով արտասահմանից Լ. Օրբելին ստեղծում է իր ինքնուրույն գիտական կոլեկտիվն ու ծավալում գիտամանկավարժական լայնածավալ գործունեություն, միաժամանակ վարելով մի շարք կարևոր գիտակազմակերպչական պաշտոններ: Նա սկսում է ղեկավարել Լեսգաֆտի անվան ինստիտուտի ֆիզիոլոգիայի լաբորատորիան, ապա Լենինգրադի առաջին բժշկական ինստիտուտի և ռազմաբժշկական ակադեմիայի ֆիզիոլոգիայի ամբիոնները, ԽՍՀՄ ԳԱ-ի Պավլովի անվ. ֆիզիոլոգիայի և ԽՍՀՄ ԲԳԱ-ի էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ու բարձրագույն նյարդային գործունեության ախտաբանական ինստիտուտները, վարելով նաև մի շարք գիտաադմինիստրատիվ պաշտոններ, այդ թվում ԽՍՀՄ ԳԱ-ի առաջին փոխպրեզիդենտի, կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի, Կիրովի անվ. ռազմաբժշկական ակադեմիայի պետի: Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին ակադ. Լ. Օրբելին, լինելով բժշկական ծառայությունների գեներալ-գնդապետ, ղեկավարում է նաև ԽՍՀՄ ռազմասանիտարական հանձնաժողովը:

Լինելով էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիր Լ. Օրբելին 1955 թ. կազմակերպում ու մինչև կյանքի վերջը, այսինքն 1958 թվականը, ղեկավարում է իր կողմից հիմնադրված ԽՍՀՄ ԳԱ-ի Սեչենովի անվ. էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ինստիտուտը: Ի. Պ. Պավլովի մահից հետո 1939-ից մինչև 1950 թ., Լ. Օրբելու վրա է դրվում պավլովյան երկու խոշորագույն կոլեկտիվների՝ ԽՍՀՄ ԳԱ Ի. Պ. Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի և ԽՍՀՄ ԲԳԱ Ի. Պ. Պավլովի անվան էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի և բարձրագույն նյարդային գործունեության պաթոլոգիայի ինստիտուտի ղեկավարությունը: Երկար տարիներ Լ. Օրբելին հանդիսացել է Լենինգրադի և Համամիութենական ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և ֆարմակալոգիական ընկերությունների նախագահը, բազմաթիվ հանդեսների ու ժողովածուների պատասխանատու խմբագիրը:

Լ. Օրբելին ղեկավարելով բազմաթիվ գիտահետազոտական ինստիտուտներ և լինելով մի շարք գիտաադմինիստրատիվ պաշտոններում, իր տաղանդով նպաստել է միութենական ֆիզիոլոգիական գիտության զարգացմանը, որը և առաջատար դեր է ստանձնել համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության բնագավառում:

Ակադ. Լ. Օրբելին խոշորագույն ներդրումներ ունի ֆիզիոլոգիական գիտության բոլոր բնագավառներում և ստեղծել է մի շարք եզակի ուղղություններ: Նրա հետազոտական մտքի կենտրոնում մշտապես եղել է կենդանի օրգանիզմների բոլոր ֆունկցիաների գործունեության համադասեցման, տրոֆիկ նյարդավորման, սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական, մարդու և կենդանիների պայմանական ռեֆլեքսայն գործունեության, ուղեղիկի հիմնական ֆունկցիաների, վերլուծիչների փոխներգործության ֆիզիոլոգիայի հարցերը, նպատակ հետապնդելով բացահայտել ուղեղի կիսագնդերի ու առանձին բաժինների համադասեցված գործունեության մեխանիզմները:

Հսկայական նշանակություն ունեն վեգետատիվ նյարդային համակարգի էվոլյուցիոն ուղղությամբ կատարած նրա հետազոտությունները: Հատկապես կարևոր է սիմպաթիկ նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական ֆունկցիաների մասին ստեղծած նրա նոր ուսմունքը: Ըստ Ի.Պ.Պավլովի գնահատականի, Լ. Օրբելու գիտական տվյալները «լուծում են սնուցողական նյարդավորման մասին եղած համարյա հարյուրամյա հանելուկը»: Սիմպաթիկ նյարդային համակարգի վերաբերյալ ստացված եզակի տվյալների համար Լ. Ա. Օրբելին արժանանում է Ի. Պ. Պավլովի անվան առաջին մրցանակի:

Օրբելու առաջնային և հիմնարար ծառայությունը համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության մեջ եղել է նոր ուղղության՝ էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ստեղծումը, կիրառելով պատմական մոտեցումը՝ էվոլյուցիոն մոտեցման սկզբունքը: Նա, ձևավորելով այդպիսի մոտեցման էությունը, հիմնավորել է էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի բովանդակությունը որպես գիտություն: Օրբելու կողմից մշակված էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի սկզբունքները լայնորեն կիրառվում են ժամանակակից հետազոտություններում:

Լևոն Աբգարի Օրբելին մեծ մասնակցություն է ունեցել պայմանական ռեֆլեքսների մասին ուսմունքի մշակման գործում: Զարգացնելով պավլովյան դասական ուղղությունները, Օրբելին հետազոտություններ է կատարում նվիրված այն գործոնների ուսումնասիրությանը, որոնք բնորոշում են գլխուղեղի կեղևի վիճակը: Նա վերլուծել է բարձրագույն նյարդային գործունեության վրա վեգետատիվ նյարդային համակարգի և ներքին սեկրեցիայի գեղձերի կողմից թողած ազդեցությունները:

Լ. Ա. Օրբելու հարուստ ու բազմակողմանի գիտական ժառանգության մեջ ուրույն տեղ են զբաղեցնում սիմպաթիկ նյարդային համակարգի ֆունկցիաներին նվիրված հետազոտությունները: Նա ապացուցում է այդ համակարգի համընդհանուր և յուրահատուկ ազդեցությունն օրգանիզմի մարմնական (սոմատիկական) ֆունկցիաների վրա: Օրբելին պարզել է, որ սիմպաթիկ նյարդը կարգավորելով հյուսվածքների մետաբոլիզմի ինտիմ գործընթացները (տրոֆիկ ազդեցություն), պայմաններ է ստեղծում իրեն իսկ հատուկ ֆունկցիաների լավագույն ձևով ընթանալու համար: Օրբելի-Գինեցինսկի երևույթի հայտնաբերմանը (1923) ստեղծվում է նոր տեսություն, որի էությունը կմախքային մկանի հոգնածության վերացումն է՝ այդ օրգանի սիմպաթիկ նյարդաթելերը գրգռելով: Դրանով մեկ անգամ ևս հաստատվում է նյարդային համակարգի հարմարողական-սնուցողական ֆունկցիայի առկայությունը, որի հիմքում ընկած է հումորալ կարգավորման մեխանիզմը: Այսպիսով, այս կամ այն օրգանի աշխատանքը կախված կլինի այն բանից, թե ինչ չափով է այն հարմարված (ադապտացված) սիմպաթիկ նյարդային համակարգի ամենատարբեր պայմաններում: Սիմպաթիկ նյարդային համակարգի դերի նման հասկացությունը ֆիզիոլոգիական գիտության ֆոնդ է մտցվում և նոր հասկացություն է օրգան-համակարգերի համադասեցված գործողությունների մասին:

➢3

➢2 Օրբելու աշխատանքները անգնահատելի դեր են խաղացել վերլուծիչների գործունեության հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների մշակման գործում: Օրբելու կողմից ղեկավարվող լաբորատորիաները պատկանել են այն կենտրոնների թվին, որտեղ ձևավորվել է զգայարանների ֆիզիոլոգիան:

Լ. Ա. Օրբելու ուշադրությանն է արժանացել ողնուղեղային կոորդինացման պրոբլեմը: Օրբելու մոտեցումների յուրահատկությունն այդ արտակարգ կարևոր հարցում կայանում է նրանում, որ ժառանգորեն ամրացված կոորդինացման հարաբերությունների առաջացման մեխանիզմների հասկացման համար օգտագործվել են Ի. Պ. Պավլովի կողմից հայտնաբերած պայմանական ռեֆլեքսների կազմավորման օրինաչափությունները:

Վերջույթների դեաֆերենտացիայի կլասիկ փորձերը հնարավորություն են տվել Լ. Օրբելուն հստակորեն հետևելու նյարդային գործընթացների գեներալիզացման և մասնագիտացման, դիֆուզ (ցրված) նյարդային գործունեության փոխարինման և կարգավորման գործունեության երևույթներին: Այս հետազոտություններում է դրսևորվել Լ. Օրբելու ունակությունները որպես էքսպերիմենտատորի՝ կենտրոնացնելու ուշադրությունն այնպիսի փաստի վրա, որը հանդիսանում է հիմնական օղակ հաղորդող երևույթների շղթայում և որը հնարավորություն կտա պարզել ողջ պրոբլեմն ամբողջությամբ:

Հարկ է նշել, որ Օրբելու ձգտումը՝ խորությամբ հասկանալ շարժողական գործողությունների կոորդինացման բնույթն, իր արտացոլումն է գտել ուղեղիկի ֆիզիոլոգիային նվիրված հետազոտություններում, որոնք թույլ են տվել ուղեղիկը դիտել որպես օրգանիզմի ռեֆլեկտոր գործունեության համընդհանուր մոդուլյատորի, որը շարժողական ապարատի հետ զուգընթաց հսկում է նրա զանազան վեգետատիվ և առբերող ֆունկցիաները: Ուղեղիկի ֆունկցիաներին նվիրված ժամանակակից աշխատանքները ոչ միայն հաստատել են այդ դրույթները, այլ նաև առավել չափով բացահայտել են այն ինտիմ մեխանիզմները, որոնց միջոցով ուղեղիկն իրականացնում է դրանց մոդուլյացիան: Ուղեղիկի վնասումները չեն հանգեցրել շարժումների որևէ խմբի դադարեցման կամ շարժողական ակտիվության կորուստի: Սակայն, ուղեղիկը հանդիսանում է ռեֆլեկտոր աղեղների ֆունկցիոնալ վիճակի և ֆունկցիոնալ պատրաստվածության կենտրոն: Օրբելու պատկերացմամբ արգելակման կայունացման դերն արտահայտվում է որպես ուղեղիկի ընդհանուր մոդուլյացնող ազդեցության հիմնական մեխանիզմներից մեկը, որն իր հաստատումն է գտել այն էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտություններում, որոնք բացահայտել են արգելակման մեխանիզմների արտակարգ զարգացվածությունն ուղեղիկի կեղևում, երկարատև դեպրեսիայի ֆենոմենը, ուղեղիկի կեղևի միակ արտատար նեյրոնների՝ Պուրկինյեի բջիջների արգելակող բնույթը:

Լ. Օրբելու գիտական աշխատանքներում միշտ կարևոր տեղ է հատկացվել պաշտպանական թեմային: Բժշկական ծառայության գեներալ-գնդապետ Օրբելու ռազմական բնույթի հետազոտություններն ընդգրկում են խորջրյա իջեցումների, բարձր և արագ թռիչքների, աէրոնավտիկայի ֆիզիոլոգիական հետազոտություններին նվիրված հարցերը, որոնք սաղմնավորում են կոսմիկական կենսաբանության, մարդու կողմից կոսմիկական տարածության հաղթահարման հիմքերը:

Լ. Ա. Օրբելին ամուր թելերով մշտապես կապված է եղել իր ժողովրդի հետ, հպարտանում էր, որ ծնվել է Հայաստանում, որ աշխարհի ամենահին ու քաղաքակիրթ ազգերից մեկի զավակն է: Նրան են աշակերտել այնպիսի տաղանդավոր հայազգի ֆիզիոլոգներ, ինչպիսիք են ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս է. Հասրաթյանը, ՀՀ ԳԱ թղթակից անդամ Ա. Քարամյանը, պրոֆ. Ա. Ալեքսանյանը, դոցենտներ Գ. Մուշեղյանը, Ռ. Բարսեղյանը և այլք, որոնք անգնահատելի դեր են խաղացել հայրենական ֆիզիոլոգիական մտքի զարգացման գործում.

Լ. Օրբելին անձամբ անգնահատելի ներդրում ունի հայկական ֆիզիոլոգիական դպրոցի ստեղծման, հաստատման ու առաջընթացի գործում;

1943 թ. Օրբելու անմիջական ջանքերի շնորհիվ Հայաստանի նորաստեղծ Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմակերպություններից մեկն է դառնում այսօրվա ֆիզիոլոգիայի ինստիտուտն ու, նրա իսկ առաջարկությամբ, ինստիտուտի առաջին տնօրեն է նշանակվում ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Խ. Կոշտոյանցը, որի ծննդյան 100-ամյակը մեծ շուքով նշվեց 2000 թ. աշնանը: Հետագայում Լ. Օրբելին ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտ է գործուղում իր լավագույն աշակերտներից մեկին՝ պրոֆ. Ա. Ալեքսանյանին, որը դառնալով ինստիտուտի տնօրեն, մեծ թափ է հաղորդում հայկական ֆիզիոլոգիական մտքի հետագա զարգացմանն ու գիտական ուղղությունների ձևավորմանը:

Լ. Ա. Օրբելին ֆիզիոլոգիայի ինստիտուտին ցույց է տվել նաև անգնահատելի գործնական օգնություն, այն հագեցնելով բազմաթիվ նորագույն գիտական սարքավորումներով և իր անձնական գրադարանի նվիրումով, ինչպես նաև նրա իսկ անմիջական մասնակցությամբ, ինչի շնորհիվ կարճ ժամանակ անց փոխվում է ինստիտուտի դեմքն ու այն դառնում է այսօրվա միջազգային լայն ճանաչման արժանացած ֆիզիոլոգիական ինստիտուտներից մեկը:

Հայաստանում, հայկական ֆիզիոլոգիական գիտության զարգացմանը մեծագույն ծառայությունների համար, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտին, որը գտնվում է Օրբելի երեք տաղանդաշատ եղբայրների անունը կրող փողոցի վրա, 1959-ին տրվում է Լևոն Աբգարի Օրբելու անունը, իսկ ավելի ուշ ինստիտուտի մուտքի մոտ է տեղադրվում նրա կիսանդրին: Լ. Օրբելու անունն է կրում նաև Հայկական ֆիզիոլոգիական ընկերությունը: Ծաղկաձորում գործում է Օրբելի երեք եղբայրներին նվիրված թանգարանը: Սակայն, առայժմ դեռ չի տեղադրված համապատասխան հուշարձան Օրբելի երեք եղբայրների անունը կրող փողոցի վրա…

Այսպիսով, Լևոն Աբգարի Օրբելու կյանքի ուղին նրան բնութագրում է որպես տաղանդաշատ գիտնականի և խոշորագույն հասարակական գործչի, որը մեծ ազդեցություն է թողել համաշխարհային ֆիզիոլոգիական գիտության և հարակից ուղղությունների զարգացման վրա: Եվ այսօր մենք պարտավոր ենք շնորհակալությամբ և մեծագույն հարգանքով վերաբերվել նրա գիտական ահռելի վաստակին ու չդադարենք հիանալ հանճարեղ հայ գիտնականի՝ Լ. Ա. Օրբելու, մեծ քաղաքացու ու հրաշալի մարդու կերպարով:

*Խաչիկ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*
*ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի առաջատար գիտական աշխատող, կենաբանական. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

# ԷԴՈՒԱՐԴ ԵՐԵՄԻ ԽԱՉԻԿՅԱՆ

**Հայ աստղագիտությունն անդառնալի կորուստ կրեց: 2018 թ. փետրվարի 4-ի առավոտյան, կյանքի 90-րդ տարում, վախճանվեց ճանաչված աստղաֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ իսկական անդամ էդուարդ Երեմի Խաչիկյանը:**

**է. Ե. Խաչիկյանը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 16-ին, Երևանում: 1951 թ.-ին ավարտել է ԵՊՀ աստղաֆիզիկայի բաժինը: Նա այդ բաժնի առաջին շրջանավարտներից էր ճանաչված աստղագետներ Մարատ Առաքելյանի և Կառլոս Գրիգորյանի հետ միասին: Համալսարանն ավարտելուց հետո աշխատանքի է ընդունվել Բյուրականի աստղադիտարանում (ԲԱ) և անցել գիտական առաջխաղացման ողջ ճանապարհը՝ կրտսեր գիտաշխատակցից մինչև գլխավոր գիտաշխատակից: 1952-55-ին սովորել է Լենինգրադի պետական համալսարանի ասպիրանտուրայում՝ Վիկտոր Դոմբրովսկու ղեկավարությամբ, որը հայտնի է ԲԱ-ում Խեցգետնաձև միգամածության լույսի բևեռացման հայտնաբերմամբ: 1957-ին պաշտպանել է ֆիզմաթգիտությունների թեկնածուի թեզ: 1975-ին՝ ֆիզմաթգիտությունների դոկտորի թեզ: Խաչիկյանը պրոֆեսոր էր (1982 թ.), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.): 1960-69 թթ. եղել է Բյուրականի աստղադիտարանի գիտական քարտուղարը, 1970 թ.-ից՝ սպեկտրադիտության լաբորատորիայի վարիչ, 1980-85 թթ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանը: Խաչիկյանը Բյուրականի աստղադիտարանի տնօրենն էր 1988-93 թթ. և 1999-2003 թթ.: Վերջին տարիներին նա ԲԱ գլխավոր գիտաշխատակից էր և գիտական խորհրդատու:**

**է. Ե. Խաչիկյանի աշխատանքները վերաբերում են գազափոշային և գիսավորաձև միգամածություններին, միգամածությունների ճառագայթման բևեռացմանը, աստղասփյուռներին և գերաստղասփյուռներին, արտագալակտիկական աստղագիտությանը, ակտիվ գալակտիկաներին, Սեյֆերտի և Մարգարյանի գալակտիկաներին: Նա հայտնի է գազափոշային միգամածությունների ուսումնասիրություններով (1955-1968 թթ.), Մարգարյանի գալակտիկաների առաջին սպեկտրային դիտումներով և Սեյֆերտի տիպի նոր գալակտիկաների հայտնաբերմամբ (1968թ., ամերիկացի աստղագետ Դանիել Վիդմանի հետ, ինչի արդյունքում այն ժամանակ հայտնի Սեյֆերտի գալակտիկաների թիվը համարյա կրկնապատկվեց), այդ գալակտիկաների դասակարգմամբ Սեյֆերտ 1 և Սեյֆերտ 2 տիպերի (1973 թ.) և «Սեյֆերտի գալակտիկաների ատլասի» հրապարակմամբ (1974 թ., նույնպես Դանիել Վիդմանի հետ), գերաստղասփյուռների հայտնաբերմամբ և ուսումնասիրություններով, ակտիվ գալակտիկաների կրկնակի և բազմակի միջուկների հայտնաբերմամբ, դրանց լուսաչափական և սպեկտրալուսաչափական ուսումնասիրություններով: Ամերիկացի հռչակավոր աստղագետ Հալթոն Արպի հետ համատեղ ցույց է տվել, որ Մարգարյան 94-ը ոչ թե գալակտիկայի միջուկ է, այլ պարուրաձև գալակտիկայում մի գերաստղասփյուռ, հետագայում հայտնաբերվեցին մի շարք նմանատիպ օբյեկտներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ակտիվ գալակտիկաների ֆիզիկայի և էվոլյուցիայի ըմբռնման համար: Գիտական հետազոտությունների արդյունքում տպագրել է 160-ից ավելի գիտական հոդվածներ և ակնարկներ: Խմբագրել է մի շարք գիտաժողովների ժողովածուներ, եղել է «Աստղաֆիզիկա» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ, «Բյուրականի աստղադիտարանի հաղորդումների» գլխավոր խմբագիր:**

**է. Ե. Խաչիկյանն այն աստղագետներից է, ով հնարավորություն է ունեցել իր ուսումնասիրություններն իրականացնել ԱՄՆ-ի (Պալոմար, Քիթ Փիք, Լիք, Մաքդոնալդ), Ռուսաստանի (Հատուկ աստղադիտարան) և Գերմանիայի (Տաուտենբուրգ) ամենամեծ աստղադիտակներով: Որպես հրավիրված աստղագետ, հետագայում՝ հրավիրված պրոֆեսոր, 1960-ականներից սկսած աշխատակցել է մի շարք երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Բուլղարիա, Իրան) աստղադիտարաններում, աստղագիտական ինստիտուտներում և համալսարաններում: Մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների և կոնֆերանսների, այդ թվում՝ Միջազգային աստղագիտական միության (ՄԱՄ) Գլխավոր ասամբլեաների 1958-2003 թթ., ՄԱՄ գիտաժողովների և այլն: Եղել է դրանցից մի քանիսի գիտական կազմկոմիտեների նախագահ և անդամ:**

**է. Ե. Խաչիկյանը երկար տարիներ դասավանդել է ԵՊՀ-ում՝ արտագալակտիկական աստղագիտություն, աստղաբաշխություն, սպեկտրալուսաչափություն և մի շարք այլ առարկաներ, ղեկավարել է 8 ասպիրանտի և հայցորդի թեկնածուական թեզերը, որոնցից 1-ը հետագայում դարձել է նաև ֆիզ.մաթ. գիտությունների դոկտոր: Խաչիկյանն անդամակցել է ՄԱՄ (1967 թ.), Եվրոպական աստղագիտական ընկերությանը (ԵԱԸ), այլ միջազգային կազմակերպությունների: 1991-1994-ին եղել է ՄԱՄ թիվ 28 «Գալակտիկաներ» հանձնաժողովի նախագահը, 1983-1992-ին՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Աստղագիտական խորհրդի բյուրոյի անդամ և «Գալակտիկաների ֆիզիկա և էվոլյուցիա և Մետագալակտիկա» հանձնաժողովի նախագահը, ԲԱ հատուկ մասնագիտական խորհրդի նախագահը: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերության «Վիկտոր Համբարձումյան» մրցանակով (1998 թ.), այլ պետական և գիտական պարգևներով, մրցանակներով և պատվոգրերով:**

**էդուարդ Երեմի Խաչիկյանի հիշատակը հավերժ կմնա հայ աստղագիտության պատմության մեջ:**

*ՀՀ ԳԱԱ նախագահություն, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունք, ՀՀ ԳԱԱ Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան*

# ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ

## (Ծննդյան 140-ամյակի առթիվ)

Անվանի գրող, թարգմանիչ, հրապարակագիր, «հայոց մեծագույն գրագիտուհի» (Ա. Չոպանյան), ազգային-հասարակական գործիչ Զապել Մկրտչի Եսայանը (Հովհաննիսյան) ծնվել է 1878 թ. Կ. Պոլսի Սկյուտար թաղամասում: Նախ ուսանել է մասնավոր դպրոցում, ապա սովորել ու ավարտել է Սկյուտարի Սուրբ Խաչ վարժարանը: 1892 թ. մեկ տարի աշակերտել է Ա. Չոպանյանին: 1895 թ. դեկտեմբերին մեկնել է Փարիզ: Մասնակցել է Լուսինյանի բառարանի կազմմանը իբրև խմբագիր-սրբագրիչ, ունկնդրել Սորբոնի համալսարանի և Կոլեջ դը Ֆրանսի դասընթացների գրականության ու փիլիսոփայության ճյուղերը: 1900 թ. Զապելն ամուսնանում է նկարիչ Տիգրան Եսայանի (1874-1921) հետ: Փարիզում աշխատակցել է հայկական և ֆրանսիական պարբերականների, հայերեն ու ֆրանսերեն լեզուներով գրել է բազմաթիվ հոդվածներ, արձակ քերթվածներ, պատմվածքներ, վիպակներ, կատարել թարգմանություններ: Ֆրանսիական ու արևմտաեվրոպական, ռուս մշակույթի և գրականության, անտիկ աշխարհի արվեստի քաջ գիտակ, գրական հասարակայնության կողմից ճանաչված ու սիրված Զ. Եսայանը 1902 թ. վերադարձել է Կ. Պոլիս և շարունակել ստեղծագործական, գրական-հասարակական բեղմնավոր գործունեությունը: 1905 թ. սուլթան Աբդուլ Համիդի դեմ կատարված մահափորձից հետո սկսվում է սոցիալական, ազգային-քաղաքական ճնշման, հալածանքների շրջան, և նա ստիպված մեկնում է Փարիզ ու այնտեղ ապրում մինչև 1908 թ.՝ օսմանյան սահմանադրության հռչակումը: 1905-1907 թթ. Զ. Եսայանը հրատարակում է «Սկյուտարի վերջալույսներ», «Կեղծ հանճարներ», «Հլուները և ըմբոստները» ու «Շնորհքով մարդիկ» վիպակները:

1909 թ. ապրիլին երիտթուրքերն Ադանայում կազմակերպում են հայերի կոտորած, որին զոհ է գնում շուրջ 30.000 մարդ: Հայ մտավորականներից, գրողներից ու գործիչներից կազմվում են պատվիրակություններ, որոնք մեկնում են աղետի վայրերը: Նրանց թվում էր նաև Զ. Եսայանը, ով շուրջ երեք ամիս լինում է Ադանա, Մերսին, Սիս, Օսմանիե և այլ բնակավայրերում, լսում ականատես մարդկանց, գրում հոդվածներ, գեղարվեստական մի շարք գործեր: Կիլիկիայի հայության մեծ ողբերգությունը, մասնավորապես, նկարագրել է «Ավերակներուն մեջ» գրքում, «Անեծքը» վիպակում, «Նոր հարսը» և «Սաֆիե» պատմվածքներում, որոնք բոլորն էլ հրատարակել է 1911 թ.:

Զ. Եսայանը 1910 թ. մեկնել է Փարիզ, հոր ծանր հիվանդության պատճառով 1911-ին վերադարձել է ծննդավայր, այնտեղ մնացել մինչև 1914 թ. մայիսը: Այնուհետև կրկին մեկնել է Փարիզ, սակայն Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին վերադարձել է Կ. Պոլիս: 1914 թ. այստեղ հրատարակվում է արձակագրուհու «Երբ այլևս չեն սիրեր» ժողովածուն:

1915 թ. ապրիլի 24-ի գիշերը աքսորի ենթակա հայ մտավորականներից միակ կինը, ում անունը գրված է եղել ցանկի մեջ, Զ. Եսայանն է: Դիպվածով մազապուրծ Հայոց ցեղասպանությունից՝ շուրջ երեք ամիս փախստականի կյանք է վարել, ապա մեկնել է Բուլղարիա, Ռումինիա, 1915 թ. վերջին էլ եկել է Կովկաս:

Անդրկովկասում՝ Բաքվում ու Թիֆլիսում, Զ. Եսայանը լայնորեն շփվել է հայ հասարակայնության հետ, հանդես է եկել արևմտահայ գրողների ու գրականության, արևմտահայության նկատմամբ կիրառվող հալածանքների շուրջ զեկուցումներով ու դասախոսություններով, գրել է հոդվածներ: Այսպես, 1916 թ. փետրվարի 6-ին Թիֆլիսի քաղաքային ժողովարանի դահլիճում՝ Հովի. Թումանյանի նախագահությամբ, դասախոսություն է կարդացել «Հայկական վերջին հալածանքները Կ. Պոլսո մեջ» վերնագրով, մարտի 12-ին Բաքվում՝ Հայ գրասերների ընկերության հրավերով Հասարակական ժողովարանում՝ Հովի. Հովհաննիսյանի նախագահությամբ, ժամանակակից արևմտահայ գրականության և գրողների մասին: Մոսկվայի Հայկական կոմիտեի հրավերով Զ. Եսայանը մեկնում է Պետրոգրադ և Մոսկվա, որտեղ կազմակերպում է հայ որբերի ու գաղթականների օգտին կատարվելիք հանգանակության գործը և օտարներին ներկայացնում հայկական կոտորածների իրական պատկերը: Ապրիլի 4-ին նա հանդես է գալիս Պետրոգրադում, ապրիլի 20-ին՝ Մոսկվայի հայկական կոմիտեում, 21-ին՝ Լազարյան ճեմարանում:

1916 թ. կեսերից մինչև 1918 թ. կեսերը Զ. Եսայանը ամբողջովին նվիրվել է հայկական կոտորածների մանրամասները հավաքելու, արձանագրելու և հրատարակելու գործին:

Բաքվում հրատարակվող «Գործ» ամսագրի 1917 թ. 2-րդ (էջ 79-139) և 3-րդ (էջ 40-99) համարներում տպագրվում է Զ. Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» վերնագրով ծավալուն նյութը: Պատմություն, որը նա լսել ու գրի է առել Միջագետքի անապատներ քշված հայ ժողովրդի մի ստվար հատվածի ողբերգական վախճանի ականատես-վկա Հայկ Թորոյանից: Հայերի կանխամտածված ցեղասպանության մի դրվագը լուսաբանող այս աշխատանքը պատմական-փաստական եզակի արժեք ունի (Զ. Եսայանը դեպքերը նկարագրում է ականատեսի՝ առաջին դեմքով):

«Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» գործը միակ պատմությունը չէ հայերի զանգվածային տեղահանությունների, աքսորի և կոտորածների մասին, որ գրի է առել Զ. Եսայանը: 1915 թ. Սեբաստիայում էլ են սկսվում համանման իրադարձությունները: Հայ ազգային-ազատագրական պայքարի պայծառ դեմքերից հայտնի դաշնակցական խմբապետ Սեբաստացի Մուրադը (Մուրադ Խրիմյան) ականատես լինելով այդ ողբերգական դեպքերին, հայրենակիցների ծանր վիճակին, իր խմբով բարձրանում է լեռները, անցնում անտառներով ու կիրճերով, դուրս գալիս Սև ծովի ափ, գրավում թուրքական մի ձկնորսանավ և ուղղություն վերցնում դեպի Բաթում: Զ. Եսայանը, օգտվելով մի շարք սկզբնաղբյուրներից, դրանց հիման վրա ստեղծում է «Մուրադի ճամբորդությունը Սվազէն Պաթում» ուղեգրությունը, որտեղ նկարագրում է Մուրադի ճամփորդության մանրամասներն ու տպագրում դարձյալ «Գործ» ամսագրում:

Զ. Եսայանի «Ժողովուրդի մը հոգեվարքը (Աքսորեալ հայերը Միջագետքի մէջ)» նյութը և «Մուրադի ճամբորդությունը Սվազէն Պաթում» ուղեգրությունը վերջին կես դարում համաշխարհային գրականության մեջ գերիշխող «վկայության գրականության» փայլուն ու անկրկնելի նմուշներից են:

… Զ. Եսայանը 1918 թ. աշնանը, Բաքուն թուրքերի կողմից գրավվելուց հետո, մեկնել է Թեհրան, այնտեղից՝ Փարիզ, այնուհետև շուրջ երեք տարի շրջագայել է Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, և ինչպես ինքն է գրում Ա. Չոպանյանին 1920 թ. մայիսի 14-ին՝ «Ես իմ վրաս առեր եմ որբերու և տարագիրներու փրկության գործը…»: Այդ ընթացքում պատրաստել է 11 էջանոց զեկույց, որտեղ նկարագրվում են 1915-ին ու դրանից հետո հայ կանանց և աղջիկներին «պատուհասած դժբախտութիւնները»: Այդ զեկույցը 1919 թ. նեկայացվել է Փարիզի Խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշային: 1920 թ. էլ Ադանայից Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին զեկուցագիր է ուղարկել Կիլիկիայի հայության դրության մասին:

…1921 թ. Զ. Եսայանը բնակվում էր Փարիզում: Նա Հայաստանի օգնության կոմիտեի, Խորհրդային Հայաստանի հետ սերտ կապեր պահպանող հայկական ընկերությունների ակտիվ անդամներից էր, հեռվից մասնակցում էր հանրապետության մշակութային կյանքին: 1933 թ. ապրիլի 19-ին Խորհրդային Հայաստանի կառավարության հրավերով անվանի գրողն ընդմիշտ գալիս է Երևան: «Ապրիլի 19-ին Երևան ժամանեց հայտնի գրագիտուհի Զ. Եսայանը: Վերջին տարիներս Եսայանը, Ավետիք Իսահակյանի հետ միասին, գնահատելի աշխատանք է կատարել գաղութահայ աշխատավորության մեջ, մասսայականացնելով Խորհրդային Հայաստանի սոցիալիստական շինարարությունը… հանդիսանալով Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի անկեղծ և ակտիվ բարեկամ մտավորականներից մեկը», - կարդում ենք «Գրական թերթ»-ում (21. IV. 1933) տպագրված «Զապել Եսայանի գալուստը» հաղորդագրության մեջ: «Եսայանը եկել է վերջնականապես հաստատվելու և աշխատելու Խորհրդային Հայաստանում»: Նա աշխատանքի է անցնում Երևանի պետական համալսարանում, որտեղ դասավանդում է արևմտաեվրոպական գրականություն: 1934 թ. Մոսկվայում մասնակցում է ԽՍՀՄ գրողների հիմնադիր համագումարին, ֆրանսերենով ելույթ ունենում:

1934 թ. Զ. Եսայանը հրատարակում է «Կրակե շապիկ» վիպակը (1936-ին թարգմանվում է ռուսերեն և ադրբեջաներեն), 1935 թ. լույս է տեսնում «Սիլիհտարի պարտեզները» վեպ-հուշագրության առաջին գիրքը: 1936-ին նա ավարտում է «Բարբա Խաչիկ» վեպը և մի քանի գլուխ տպագրում մամուլում: 1937 թ. հրատարակվում է Զ. Եսայանի «Երկեր»-ի լիակատար ժողովածուն:

1937 թ. Զ. Եսայանը, հայ մեծանուն մտավորականներից շատերի պես, դարձել է անհատի պաշտամունքի զոհ, ձերբակալվել է, նետվել Բաքվի բանտ: Մահացել է 1943 թ.:

Զ. Եսայանի կյանքի, գործունեության և գրական մեծարժեք ժառանգության մասին, ինչպես վերը նշվեց, գրվել են գրքեր, տպագրվել հոդվածներ, եղել են հրապարակումներ: 1978 թ. լայնորեն նշվել է Զ. Եսայանի ծննդյան 100-ամյակը: Վերջին տարիներին էլ նրա անվան հետ կապված մի շարք կարևոր իրադարձություններ են տեղի ունեցել: Բազմաթիվ հիշարժաններից նշենք միայն երկուսը:

Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ֆ. Օլանդի հրավերով պաշտոնական այցով այդ երկրում գտնվելու օրերին՝ 2017 թ. մարտի 8-ին, Փարիզի քաղաքապետ Ա. Իդալգոյի հետ հանդիպումից հետո Փարիզի քաղաքապետարանի «Հանդիսությունների» սրահում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանն ու քաղաքապետը ելույթներ են ունեցել փարիզահայ համայնքի ներկայացուցիչների առջև: Ա. Իդալգոն, մասնավորապես, ասել է. «…մենք որոշել ենք Փարիզի փողոցներից մեկը վերանվանել Զապել Եսայանի անունով, ով գտնվել է հայ ժողովրդի կրած տառապանքների կիզակետում և խորհրդանշում է այդ բոլոր տառապանքները»:

«Ազգ» թերթում տպագրված «Զապել Եսայանը՝ աշխարհի անվախ կանանց «հնգյակում» է» վերնագրով հաղորդումից տեղեկանում ենք, որ կանանց ու մոդայի մասին բրիտանական “Corporate 29” հրատարակությունն առանձնացրել է մարդկության պատմության մեջ հինգ ամենից անվախ կանանց մասին պատմություն, որը վերցրել է Հաննա Ջեվելլի՝ «100 անվախ կանայք» խորագրով վերջերս լույս տեսած գրքից: Ցանկում ընդգրկված է նաև «Կ. Պոլսի ամենահայտնի հայ գրագիտուհիներից մեկը՝ Զապել Եսայանը, ով փաստագրել է Օսմանյան կայսրությունում 1915 թ. Հայոց ցեղասպանության սարսափները»: Այնուհետև կենսագրական հայտնի որոշ տեղեկություններ են բերվում գրողի մասին:

Զապել Եսայանի անունը եղել է, կա ու կմնա հայ ժողովրդի երախտավորների շարքում:

***Անուշավան ՉԱՔԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտությունների դոկտոր,***
***«Պատմաբանասիրական հանդես» գլխավոր խմբագրի տեղակալ***

# ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ...

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արտակ Մաղալյանի աշխատասիրությամբ ընթերցողի սեղանին է դրվել մի կարևոր գիրք՝ 19-րդ դարի առաջին կեսի մահմեդական պատմագիր Միրզա Ադիգյոզալ-բեկի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը: Երեսուներկու էջ կազմող առաջաբանում նա մանրամասն ներկայացնում է մահմեդական պատմագրի կողմից սույն աշխատությունը ձեռնարկելու շարժառիթներն ու դրդապատճառները, նրա կառուցվածքը, արժեքներն ու արժանահավատությունը, ի վերջո տվյալ ժամանակաշրջանի մարտահրավերներն ու պատմիչի կյանքի ու կենսագրության տարեգրությունը: Միրզա Ադիգյոզալ-բեկը ծնվել է XVIII դարի 80-ական թվականներին՝ Ղարաբաղում: Նա ունեցել է բավական սրընթաց ու փոթորկալից կենսագրություն: 1795 թ. ամռանը, երբ Իրանի տիրակալ Աղա Մուհամմադ խանի զորքերը արշավել են Ղարաբաղ, ապագա պատմիչը ծնողների հետ փախել է Թիֆլիս: Իսկ հետո, երբ թշնամին հասել է Թիֆլիս, վերջիններս հեռացել են Ախալքալաքի և Ախալցխայի կողմերը: Որոշ ժամանակ անց Ադիգյոզալ-բեկի ընտանիքը միացել է Գյուլիստանի Մելիք-Աբով Մելիք-Բեգլարյանի հպատակներին և բնակություն հաստատել Բոլնիս բնակավայրում: Հենց վերոնշյալ հայ մելիքի հովանավորությամբ նրանք գտել են մշտական կացարան: 1799 թ. վերջերին Ադիգյոզալ-բեկը ծառայության է անցել վրացական արքունիքում՝ որպես գրագիր-թարգմանիչ: Այդ ընթացքում նրա մոտ ձևավորվել է ռուսական կողմնորոշումը, որին հավատարիմ է մնացել հետագա գործունեության ընթացքում: Նա մասնակցել է 1804-1813 և 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմներին և մեծապես շահել է ռուսական զինվորական իշխանությունների վստահությունը: 1830 թ. սկզբին թողել է շուրջ 30-ամյա զինվորական ծառայությունը և աշխատանքի անցել Ղարաբաղի գավառական դատարանում, ինչն էլ նրան հնարավորություն է տվել առավել մոտիկից ու խորքից ծանոթանալ այդ երկրամասի պատմությանն ու առօրյային: Հավաքում է անհրաժեշտ նյութեր, որոնք նա օգտագործում է «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը շարադրելու ընթացքում: Իսկ վերոնշյալ աշխատությունը նա շարադրում է 65 տարեկան հասակում՝ 1845 թվականին:

Մահմեդական պատմիչի կյանքն ու գործունեությունը մանրամասն ներկայացնելուց հետո Ա. Մաղալյանը բարեխիղճ հետազոտողի և շիտակ, արդարամիտ պատմաբանի քննախույզ հայացքով ներկայացնում է աշխատության հրատարակության հետ առնչվող խնդիրները և Ադիգյոզալ-բեկի պատմագիտական վարկածներն ու տեսակետները: Մանրակրկիտ դիտարկվում են այն վարկածները, որոնց հիման վրա հայ պատմագիտությունը կարող է հիմնովին ջախջախել ադրբեջանական «պատմաշինարարների» սարքած կեղծ տեսակետները Ղարաբաղի պատկանելության, նրա էթնիկ բնակչության կազմի և այլ հիմնախնդիրների վերաբերյալ:

Ժամանակագրական առումով մահմեդական պատմիչի «Ղարաբաղ-նամէ» աշխատությունը սկսվում է 1736 թ. Մուղանի դաշտում գումարված «կուռուլթայի» (ավագանու ժողովի) նկարագրությամբ, որի արդյունքում Նադիր նվաճողը տիրացավ Իրանի գահին: Իր գահակալությանը դեմ արտահայտված Գանձակի խանի իշխանությունը թուլացնելու նպատակով Խամսայի մելիքներին հանում է Գանձակի խանության ենթակայությունից և անմիջականորեն դնում իր ենթակայության ներքո: Ա. Մաղալյանը մեծ ուշադրությամբ քննելով սույն հաղորդումը, շեշտադրում է, որ փաստորեն ոչ այլ ոք, քան հենց ինքը՝ մահմեդական պատմագիրն է վկայում Նադիր շահի կողմից Գանձակի բեկլարբեկությունից անկախ հայկական ինքնավար իշխանության կազմավորման մասին: Հայ պատմաբանը սույն տեղեկության իսկությունը հաստատելու համար վկայակոչում է Խամսայի մելիքությունների գահերեց Դիզակի Մելիք-Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը. «Ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան: Արաղից շահ Նադիր զորեղ թագավորը իր զորքով եկավ, երկիրը օսմանլուի ձեռքից առավ: Նրան էլ այնքան ծառայություն մատուցեցի, որ նա քրիստոնյա ազգի 6 մահալների՝ Թալիշի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի և Դիզակի վրա, ինձ որպես խան և բեկլարբեկի կարգեց, շնորհ արեց»: Ահա սույն երկու կարևորագույն և արժանահավատ փաստերը ծարարների սարքած կեղծ տեսակետներին՝ կապված Արցախի պատկանելիության հիմնահարցի հետ:

Ա. Մաղալյանը քննության է առնում մահմեդական պատմիչի աշխատության այն գլուխը, որում տրված է տխրահռչակ Փանահ խանի ազգաբանությունը, նրա հաստատումը Արցախում: Բավական է նշել, որ վերջինս գլխատման էր դատապարտված Նադիր շահի կողմից, սակայն հանգամանքների բերումով կարողացավ ոչ միայն խուսափել մահվան պատժից, այլև բարձրանալ մինչև խանի աստիճան: Այս կապակցությամբ Ա. Մաղալյանը հետևյալ կարևոր դիտարկումն է կատարում. «Սակայն, պետք է նկատի ունենալ, որ Ղարաբաղի խանության հիմնադիր հորջորջվող Փանահը խանի տիտղոս ստանալու պահին դեռևս Խամսայում չէր գտնվում, այնտեղ ոչ մի իշխանություն չուներ: Այդ պահին Փանահ խանի տիտղոսը ձև էր առանց բովանդակության»: Սա անչափ դիպուկ և պատմական իրողություններին լիովին համապատասխանող միանգամայն ճշմարտացի դիտարկում է:

Իր նորահաստատ իշխանությունը կայացնելու և ամրապնդելու նպատակով Փանահը որոշում է անցնել նստակեցության և 1748 թ. Քյաբիրլուի մոտակայքում կառուցում է Բայաթ բերդը: Այս կապակցությամբ շատ տպավորիչ ու համոզիչ է անվանի հայ պատմաբան Լեոյից արված հետևյալ գրառումը. «Քյաբիրլուն մեծ աջակցություն էր ցույց տալիս նրան, և նա արագ կերպով ավազակապետի դիրքից անցնում է տիրապետողի դիրքին, իրեն հպատակեցնելով Ղարաբաղի տափարակներում թափառող ցեղերը: Ինքն էլ մի թափառական՝ իշխանություն ձեռք բերելուց հետո նա հասկանում է նստակեցության անհրաժեշտությունը»: Ա. Մաղալյանը, իր հերթին, այս ամենին ավելացնում է այն, որ նստակյաց կյանքի անցնելու անհրաժեշտության գիտակցումը հեղաբեկում էր քոչվորական աշխարհընկալման մեջ: Ահա այստեղ բացվում է անկեղծ ճշմարտությունը այն իրողության, թե ինչպես քոչվորապետ Փանահին հաջողվեց բնավորվել Արցախ աշխարհի սրտում, որի մասին նա անգամ երազել չէր կարող: Բացվում է դավաճանության կծիկը, առանց որի մեր թշնամիները չէին կարող դարեդար տիրել հայոց պատմական հողերին: Մի երևույթ, որը միշտ էլ կենսունակ է եղել մեր պատմության բոլոր ժամանակաշրջաններում:

Ա. Մաղալյան հայ պատմաբանը և ուսումնասիրողը փաստառատ տվյալներով ու վրդովմունքի մեծ ուժով դատապարտում է 18-րդ դարակեսի դավաճաններին և վերջիններիս ազգակործան ընթացքը կամա թե ակամա արդարացնողներին: Վերոնշյալ դավաճանների շարքում Մելիք-Շահնազարի ծանր, բացասական կերպարն է անեծքի պես կախված անցնող-գնացող ժամանակների հոլովույթում: Այս ամենի մասին պատմաբանը առարկայական խստությամբ բանաձևում է այսպես. «Մելիք-Շահնազարի հայրենադավ գործունեությունը չափազանց ծանր ազդեցություն ունեցավ Արցախի հայկական իշխանությունների վրա: Նրա գործունեությունը գնահատելիս միշտ պետք է նկատի ունենալ այդ հանգամանքը: Այս խորապատկերում, կարծում ենք, սխալված չենք լինի, եթե պնդենք, որ Մելիք-Շահնազարի բացասական կերպարի հեղինակը ոչ թե Ադիգյոզալ-բեկն է, Ռաֆֆին կամ մեկ այլ ուսումնասիրող, այլ հենց ինքը Մելիք-Շահնազարը, իր ազգադավ գործերով»:

Քննության առնելով Ադիգյոզալ-բեկի և զուգահեռաբար այլ հեղինակների հաղորդած տեղեկությունները, Ա. Մաղալյանը ևս մեկ անգամ հաստատում և վերահաստատում է այն ճշմարտությունը, որ քոչվորապետ Փանահի Շուշիում հաստատվելը (ինչը որ տեղի ունեցավ հայ մելիքական ուժերի պառակտման պատճառով) ծանրագույն, ավերիչ հետևանքներ ունեցավ Արցախի էթնիկական, ազգային, քաղաքական, բարոյական նկարագիրը, դեմքն ու դիմագիծը աղարտելու առումով:

- Եվ հենց Արցախի սրտում՝ Շուշիում հաստատվելն էր, որ կենսունակություն հաղորդեց տափարակներում անխուսափելի կործանման դատապարտված խանությանը՝ ձևը վերածելով բովանդակության,- նշում է Ա.Մաղալյանը:

Հենց այդ ժամանակներից սկսվում է այլացեղ և այլակրոն էթնիկ տարրերի ներթափանցումն Արցախ: Վերոնշյալ էթնիկ միավորների թվում էին թուրք-թաթարական և քրդական քոչվոր և կիսավայրենի այնպիսի ցեղախմբեր, ինչպիսիք էին ջևանշիրցիները, սարըջալլուները, օթուզիքիները, քյաբիրլուները, քոլանիները, իգիրմիդորթները, որոնց բնակեցումը Արցախում իսկական չարիք դարձավ արցախահայության համար: Այդ մասին բավական խոսուն փաստեր է ներկայացնում մահմեդական պատմիչ Ադիգյոզալ-բեկը:

Վերջում հավելենք, որ այս գիրքը իր հաստատուն տեղն ունի և դեռ կունենա հայագիտական կարևոր գործերի շարքում, ուստի խիստ անհրաժեշտ է նրա թարգմանությունը օտար լեզուներով:

***Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***Պատմական գիտությունների թեկնածու***

# «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» գիտաժողովը

2018 թ. հունվարի 27-ին ՀՀ ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը տեղի ունեցավ «Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» աշխատանքային գիտաժողովը: Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը: Այն նվիրված էր համանուն պետական նպատակային ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքում օդերևութաբանական, սեյսմաբանական, բնապահպանական և այլ մշտադիտարկման տվյալների հիման վրա ամպային միջավայրի ռեսուրսներով, համակարգչային մոդելների միջոցով ստացված գիտական և կիրառական արդյունքների ներդրմանը:

Գիտաժողովին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ նախագահության, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, ՀՀ արտակարգ իրավիճակների և ՀՀ բնապահպանության նախարարությունների, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի, ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի, Երևանի կապի միջոցների ինստիտուտի մասնագետներ:

«Ամպային հաշվարկների միջավայրի ստեղծում գիտական և կիրառական խնդիրների լուծման համար» պետական նպատակային ծրագրի համակարգող, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Սահակյանը ներկայացրեց ծրագրի նպատակները, խնդիրները: Գիտաժողովի մասնակիցներն իրենց զեկուցումներով ներկայացրեցին ծրագրի շրջանակներում ստացված արդյունքները և հետագա անելիքները:

ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանն իրենց ելույթներում բարձր գնահատեցին նպատակային ծրագրի շրջանակներում ձևավորված համագործակցությունը և ստացված գիտական ու կիրառական արդյունքները:

Հիշեցնենք, որ 2017 թ. ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն», ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ների միջև ստորագրվել են երկկողմ համաձայնագրեր: Համաձայնագրերը նախատեսում են համատեղ գիտատեխնիկական ներուժի միջոցով իրականացնել հետազոտական ծրագրերի արդյունքների ներդրումը, ստեղծել ընդհանուր հաշվողական միջավայր, նախագծել և ներդնել ժամանակակից հաշվողական մոդելներ, թվայնացնել բազմաթիվ դիտարկումների տվյալներ, զարգացնել ծառայությունների ավտոմատ կառավարման համակարգեր:

Գիտաժողովի շրջանակներում անցկացված կլոր սեղանի ժամանակ առանձնահատուկ կարևորվեց ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում սուպերկոմպյուտերային կենտրոնի նախագիծը, որի միջոցով կստեղծվի հզոր ամպային միջավայր, որը կունենա հաշվողական վիրտուալ ռեսուրսներ և տվյալների հուսալի և անվտանգ պահուստներ: Այսպիսի կենտրոնի գոյությունը կնպաստի ինչպես գիտության և տնտեսության տարբեր ոլորտների մեծածավալ խնդիրների լուծմանը, այնպես էլ կապահովի ֆինանսական միջոցների խնայողություն:

***ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն***

# ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳՆԱԾԱՄԸ

## ՀԱՄԱՍՓՅՈՒՌՔՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԱՌԻԹ

(Համաշխարհային գործընթացների համատեքստում)

*(Սկիզբը՝ N 1-ում)*

**Գաղափարաքաղաքական** *օբյեկտիվ* և *սուբյեկտիվ* դրդապատճառներից ելնելով՝ հայությունը թե՛ **սփյուռքում** և թե՛ **Հայաստանում** հայրենադարձվելու և կամ հայրենադարձ ընդունելու առումով ազգային պատրաստվածության տարբեր հարթություններում է:

Այսպես, ***Սիրիայից*** ժամանակին Հայաստան այցելած, Հայաստանում ուսանած, Հայաստանում տարբեր գործակցություն (անձնական, գիտական, գործարար և այլն) իրականացրած ու իրականացնող և դրանով իսկ Հայաստանի լեզվական առանձնահատկություններին (նաև՝ ռուսերենի գործածություն), նիստ ու կացին, բարքերին, սովորույթներին և կենցաղավարման այլ առանձնահատկություններին ծանոթ տանը Հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհով մեկ սփռված հայության և նրանց ժառանգների զանգվածային հավաքման (Հայրենադարձություն, «Արի տուն», Տունդարձ, Հայահավաք), համակողմանի բնակեցման և մինչև օրս Հայրենիքը լայնամասշտաբ ներդրումների վայր դիտարկելու առաջնահերթությունների սակարկումը սփյուռքի իր հայրենակիցների որոշակի հատվածի կողմից, ինչպես նաև սփյուռքի և, մասնավորապես՝ Սիրիայի, որպես «Մայր գաղութի» առավելագույնս «հայապահպանված» հայության հայրենադարձվելու նկատմամբ նախընտրության և նախանձախնդրության պակասը:

Նախկինում սփյուռքի որոշակի հատվածի համար Հայաստանի հետ դոտելով սփյուռքը միանշանակ դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունը, առանձին դեպքերում նախապատվությունը տալով սատարել փախստական հայերի արտերկրում հաստատվելուն, հայության նորանոր իրարհաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ հերթական «հայրենիքներ» (վերա)կառուցելու անհեռանկար և իմաստազուրկ գործընթացով զբաղվելու, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԱՀ-ն, իր զավակների բոլորեքյան աջակցության կարիքն ունի:

Վիճակը նույնն է նաև այլ համայնքներում ևս, որտեղ, ժամանակի ընթացքում նմանատիպ (սիրիական) կամ այլ սցենարի չբացառվող իրադարձությունների զարգացման ու ծավալման պայմաններում անգամ Հայրենիք վերադարձը և հայրենադարձների տեղավորմանն աջակցելը մնում է սակարկելի (աչքի առաջ է Իրաքից, Եգիպտոսից, Սիրիայից հեռացած և հեռացող հայության պարագան), համասփյուռքյան առաջնահերթություններից դուրս՝ նախապատվությունը տալով օտար եզերքներում հանգրվանելուն, և կամ՝ ազատ, անկախ, իսկ Արցախի ազատագրումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայրենիքը [«Ազատ, անկախ և միացյալ Հայաստան»՝ 1919 թ. ՀՅԴ հռչակած քաղաքական հավատամքը–Ք. Ա.] որպես ցատկահարթակ (տրամպլին), տարանցման (տրանզիտ) վայր է դիտարկվում:

Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերներն առավել քան առիթ պետք է դառնան համասփյուռքյան առաջնահերթությունների վերարժևորման, համայնքային կյանքը սփյուռքում բարոյահոգեբանական, գաղափարագործնական առումով արմատապես վերանայելու և վերակազմակերպելու համար: Այդ դարակազմիկ առաքելությունն առանց երկմտելու և հապաղելու միասնականորեն իրենց ձեռքը պետք է վերցնեն ինչպես սփյուռքն իր համայնքային բոլոր կառույցներով՝ Հայ եկեղեցին (Առաքելական, Ավետարանական, Կաթողիկե), ազգային կուսակցությունները (ՍԴՀԿ, ՀՅԴ, ՌԱԿ), համահայկական բարեգործական կազմակերպությունները, սփյուռքյան բոլոր միություններն ու ակումբները, հայ և օտարալեզու հայկական զանգվածային լրատվությունը (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, համացանց), ուսումնակրթական հաստատությունները, այնպես և Մայր Հայրենիքը՝ Հայաստանը (ՀՀ և ԱՀ), իր պետական, եկեղեցական, հասարակական և այլ լծակներով՝ ուղղորդելու և համակարգելու միացյալ ջանքերը:

Հարկ է, որ Հայաստանի և սփյուռքի կառույցներն իրենց հայրենասեր ու ազգասեր կարող ուժերի միջոցով, նախ և առաջ, գաղափարական առումով վերանայեն օրեցօր առավել անապահով դարձող աշխարհում հայության համազգային առաջնահերթությունները, գոյատևման հեռանկարները և ուղենշեն հետագա անելիքները: Համահայկական, համասփյուռքյան ամենօրյա հետևողական բացատրական ակտիվ գործունեությամբ, հրապարակումներով, ելույթներով, քարոզներով, ցուցադրություններով լուսավորական աշխատանք տանել հայկական համայնքներում՝ ներկայացնելով աշխարհաքաղաքական բուն իրավիճակը, համաշխարհային զարգացումներն ու մարտահրավերները, ծուլման և սերնդափոխությունների արդյունքում այլասերման և հայ ինքնության ձևափոխման ու ձևախեղման վտանգները:

Հակառակ դեպքում, սփյուռքը, որպես ազգային կարևորություն ներկայացնող հավաքականություն, աննպատակ և ապարդյուն «հայապահպանությամբ», հարափոփոխ, արագ գլոբալացվող և անընդհատ նորանոր մարտահրավերների հետ առերեսվող աշխարհաքաղաքական պայմաններում դատապարտված է ծուլման ու անհետացման:

Մերձավոր ու Միջին Արևելքի, ինչպես նաև Արևմուտքի երկրների անապահով ու անհեռանկար ապագայի և օրեցօր սպառնացող վտանգների, մարդկության ու քաղաքակրթության նկատմամբ ահագնացող համաշխարհային մարտահրավերների պայմաններում՝ Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց, այժմ արդեն օտար ափերում նորից ու նորից ֆիզիկական գոյության պահպանման խնդրի առաջ կանգնած, ինչպես նաև ուծացման դատապարտված հայությանը հնարավոր կարող է լինել գաղափարապես ու բարոյահոգեբանական առումով նախապատրաստել անցում կատարելու մեկդարյա պասիվ ու անարդյունավետ, թափառական ու «անհայրենիք» ***անհեռանկար հայապահպանությունից դեպի գործնական հողապահպանություն***՝ «Դեպի Երկիր» **Հայրենադարձության** և **Հայրենաշինության**: Հայրենադարձություն, որը ենթադրում է սփյուռքը գաղափարապես, ֆիզիկապես և նյութապես ուղղորդել բացառապես Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև՝ հերոսների արյան գնով ազատագրված Լեռնային Ղարաբաղի՝ Արցախի Հանրապետություն, անսակարկ զանգվածային և համակողմանի **Տունդարձի**:

***Դեր Զորի Սրբոց նահատակաց հայկական եկեղեցին պայթեցված իսլամիստ ահաբեկիչների կողմից (2014 թ., սեպտեմբերի 21-ին՝ ամսաթիվը պատահական չէ ընտրված, Հայաստանի Երրորդ Հանրապետության անկախության հռչակման օրը)***

Սիրիայի հայերի համար *օբյեկտիվորեն* դյուրին է եղել Հայաստան հայրենադարձվելու որոշում կայացնելը իրենց երկրում հակամարտությունը սկսելուց դեռ շատ առաջ կամ տակավին նոր սկսված տարիներին:

Այնինչ, Սիրիայում հակամարտության խորացման պատճառով արդեն հետագա տարիներին Հայրենիքում ապաստանածների («ակամա հայրենադարձ») մի որոշ մասի համար, Հայաստանը դիտվել և տակավին կարող է դիտվել որպես ժամանակավոր հանգրվան՝ տարանցման (տրանզիտ) վայր, ինչպես այլ երկրներ (Եվրոպա, ԱՄՆ, Ավստրալիա, արևելքի երկրներ) փոխադրվելու, նույնպես և ետ՝ Սիրիա վերադառնալու համար, ինչը հիմնականում *սուբյեկտիվ* դրդապատճառներ ունի (հայաստանյան միջավայրին ընտելանալու ցանկության պակաս, Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարություններին, ռազմաքաղաքական բարդություններին, արևելահայ լեզվամտածողության առանձնահատկություններին, նաև՝ ռուսերեն լեզվին, նիստ ու կացին, բարքերին, սովորույթներին, մշակութային և կենցաղավարման այլ առանձնահատկություններին անծանոթ լինելը կամ խորթ ընդունելը և այլն):

Մինչդեռ, ***անկախ Հայաստանի*** քաղաքացիները, ընդհանուր առմամբ (առանձին աննշան բացառություններով), հանդուրժող վերաբերմունք են դրսևորել և դրսևորում Սիրիայի մեր հայրենակիցների նկատմամբ, ինչը *օբյեկտիվ* գործոնների հետևանք է (խորհրդային և հետխորհրդային տարիներին պարբերական և անհատ հայրենադարձության արդյունքում արևմտահայ լեզվամտածողությանը, նրանց կողմից նաև՝ թուրքերենի, արաբերենի և այլ լեզուների գործածությանը, նիստ ու կացին, բարքերին, սովորույթներին, մշակութային և կենցաղավարման այլ առանձնահատկություններին ծանոթ, ընտելացած, առանձին դեպքերում՝ վարժված ու յուրացրած լինելը):

Ուստի, ՀՀ և ԱՀ բնակչության զգալի մասի *սուբյեկտիվ* ընկալումներում անհասկանալի է՝ տակավին 1991 թվականից ազատ, անկախ դարձած և ԼՂՀ/ԱՀ հռչակումով նաև միացյալ դառնալու ճանապարհին գտնվող Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելու հարաբերություններում գլխավոր խոչընդոտ հանդիսացող ՍՍՀՄ-ի փլուզումից քառորդ դար անց, այժմ արդեն որպես նոր խոչընդոտներ են դիտարկվում (ընդ որում, հիմնականում նույն այդ ուժերի իսկ կողմից) Հայաստանի սոցիալ-տնտեսական դժվարությունները, քաղաքական դրությունը Արցախում, արևելահայ լեզվամտածողության, ինչպես նաև ռուսերենի գործածության առանձնահատկությունները և այլն:

Ավելին, պատերազմի հետևանքով ավերակված որդեգրած երկրի («սիրիական հայրենիք») ազգային կառույցները վերականգնելու, վերաշինելու կոչեր են հնչում, որոնք խոչընդոտել և խոչընդոտելու են իրական Հայրենիքի վերակառուցման համասփյուռքյան ջանքերին, ինչպես նաև բոլոր ժամանակների համար առաջնահերթ ու օրախնդիր՝ հայահավաքի գաղափարագործնական ծրագրին:

Ցավոք, քաղաքական-կուսակցական հատվածական գաղափարախոսությունը, առանձին բացառություններով, սփյուռքի որոշ շրջաններին հեռու է պահում ամբողջովին միանալու և զորացնելու Սիրիայից հայրենադարձ մեր հայրենակիցներին աջակցելու Հայաստանի ջանքերին՝ դրանով իսկ խոչընդոտելով սփյուռքը միանշանակ դեպի Հայրենիք կողմնորոշելու հնարավորությունը, առանձին դեպքերում նախապատվությունը տալով սատարել փախստական հայերի արտերկրում հաստատվելուն, հայության նորանոր իրարհաջորդ սերունդներ մատնելով օտարության մեջ հերթական «հայրենիքներ» (վերա)կառուցելու անհեռանկար և իմաստազուրկ գործընթացով զբաղվելու, մինչդեռ Հայրենիքը՝ ՀՀ-ն ու ԱՀ-ն, իր զավակների բոլորեքյան աջակցության կարիքն ունի:

***Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ***
***Պատմական գիտությունների թեկնածու,***
***ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող***

# ԼՌԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՀԸ

**1965 թվականին հարավսլավացի Ս. Ստեֆանովիչը հրատարակեց աշխարհի ամենասեղմ երկու էջանոց գիրքը: Գրքում գրված էր ընդամենը երկու բառ «Պատերա՞զմ: Ո՛չ»:**

Իսկապես, որքան էլ ահասարսուռ լինեն աշխարհակործան բնական տարերքները, միևնույն է, դրանք չեն կարող համեմատվել պատերազմ կոչվող զարհուրելի գեհենի հետ, որի հեղինակը մարդ արարածն է: Բանական մարդը, ում տրվեց արարելու, երկիրը դրախտավայր դարձնելու բացառիկ շնորհը, իր երևակայությունը սկսեց մսխել դժոխային զենքեր ստեղծելու, իր նմանին ոչնչացնելու, ինքն իր գլխին պատուհասներ բերելու, իրեն ընծայված երազը դժոխքի վերածելու վրա: Եվ հազարամյակներ շարունակ ինքն իրեն տառապանքների դատապարտած, ինքն իր թշնամին դարձած մարդկությունը մինչ օրս չի կարողանում ձերբազատվել ինքնաոչնչացման խելագար մոլուցքից:

Ու երևի ճակատագրի ծաղրն է, որ հենց մենք՝ հայերս, որ արդարացիորեն կարող ենք մեր մոլորակում խաղաղության դրոշակակրի տիտղոսը կրել, մե՛նք, որ առանձնանում ենք օտարներին մեզնից գերադասելու, մեզնից առավել սիրելու հատկությամբ, դարեր շարունակ դատապարտված ենք պատերազմ կոչվող զարհուրելի հրեշի ընկերակցությանը, մեր գլխավերևում մշտապես նրա մահաբույր շունչը զգալու անեծքին: Բայց Աստված, թերևս, հենց խաղաղության պահապանի առաքելությունը շարունակելու համար է մեր արյան մեջ զմռսել ինքնապահպանման այն գենետիկ կոդը, որը վտանգի պահին արթնանում ու անպարտելի հերոսներ է ծնում: Հենց այդ հրաշագործ կոդի մասին է հիշատակել Նապոլեոնը, երբ իր հայ մարշալների մասին ասել է. «Նրանց խիզախությունն անգերազանցելի է, քանի որ նրանց երակներով հայի արյուն է հոսում»:

Իսկապես, վտանգի պահին խաղաղասեր հայ ժողովուրդն անճանաչելիորեն կերպարանափոխվում է, բռունցքվում, անպարտելի դառնում: Ցավոք, միայն այդպիսի պահերին ենք ականատես լինում մեզ մշտապես պակասող միասնականության, համախմբման, իրար զորավիգ լինելու աննախադեպ հրաշքին:

«Երբ այդ մարդիկ՝ հայերը, ծիրանե թմբուկների ահեղագոչ ձայնակցությամբ իրար ձեռք բռնեն և ուս ուսի տված գետինը դոփեն, այդժամ ավելի շուտ իմ պալատի սյուները փոշու կվերածվեն, քան հնարավոր կլինի նրանց կանգնեցնել»: Սրանք էլ Հուլիոս Կեսարի խոսքերն են հայերի մասին:

2016-ի ապրիլը կրկին մահագույժ դարձավ մեզ համար: Բայց մի՞թե դա սպասելի չէր: Հազարամյակներ շարունակ պատմության դասերը սերտած ժողովրդի համար առնվազն մանկամտություն է այս իրավիճակում, երբ շրջապատված ես թշնամի հարևաններով, երբ սահմանդ շփման գծի է վերածված, ձեռքերդ ծալած նստելն ու հանկարծակիի գալը: Այս անգամ էլ, ու արդեն քանի հազարերորդ անգամ, համոզվեցինք, որ օրհասական պահին մեր միջից հերոսներ են ծնվում: Կրկին ականատես եղանք վերը նշված գենետիկ բացառիկ կոդի արթնացմանն ու հրաշքին: Ու կրկին հպարտացանք մեր հերոսներով: Հերոսությունը՝ հերոսություն, բայց էլի արդեն որ հազարերորդ անգամ համոզվեցինք, որ մեզ՝ հայերիս, հետին խելքն է պակասում:

Այդ ինչպե՞ս եղավ, որ անսանձ փոթորիկների միջով անցած մեր նավը, երբ խարիսխ գցեց երազած ափին, ինքներս մեր դեմ ծառս եղանք ու պարտվում ենք հենց մեր դեմ մղած ճակատամարտում: Այդ ո՞ւմ դիվային ուղեղում հղացավ Հայաստանի արդյունաբերական հզոր համալիրը ոչնչացնելու ազգադավ ծրագիրը: Ինչո՞ւ անուշադրության մատնվեց համաշխարհային ճանաչում ունեցող հայ հզոր գիտությունը: Ահա ինչու է ընկել հայ գիտության վարկը: Եվ իբր հերիք չէր գիտության անբավարար ֆինանսավորումը, այն նորից կրճատվեց:

Ի վերջո ո՞րն է այս ամենի նպատակը, ինչո՞ւ ենք մենք ի վնաս մեզ գործում: Մեզ ի՞նչն է խանգարում, որ վերջապես ինքներս մեզ սիրենք, որ ամրացնենք ու անառիկ դարձնենք մեր երկիր-ամրոցը: Թեկուզ՝ փոքր, բայց հզոր ամրոցը: Հզոր՝ ոչ միայն վտանգի պահին ինքնազոհաբերվող իր հերոսներով, այլ նաև՝ իր ուղեղներով: Հատկապես քսանմեկերորդ դարում հենց մենք՝ հայերս, պիտի փայլենք (մինչդեռ մենք իսկապես փայլում էինք, չէ՞) գիտության ոլորտում մեր ունեցած հաջողություններով: Կարող էինք, չէ՞, այս երկու տասնամյակի ընթացքում գոնե հիմքեր գցել տնտեսության զարգացման համար, հպարտանալ մեր նվաճումներով, արժանանալ աշխարհի հզորների հարգանքին:

Հետո՞ ինչ, որ փոքր երկիր ենք: Սևակը չէ՞ր փաստում՝ «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են ասում»: Բա ո՞ւր մնաց մեր խելքը: Աշխարհում էլի կան փոքր երկրներ: Դրանցից մեկն էլ, օրինակ, խաղաղության կղզյակ Շվեյցարիան է, որը ո՛չ բնական հանածոներ ունի, ոչ էլ՝ ելք դեպի ծով: Ու չնայած այն Հայաստանի պես շրջապատված չէ թշնամիներով, բայց աշխարհի ամենառազմականացված պետություններից էին: Վաղուց Շվեյցարիան իրեն հռչակել է չեզոք պետություն: Ու այլևս ոչ մեկի մտքով չի անցել հարձակվել Շվեյցարիայի վրա, որովհետև այն դարձել է աշխարհի ամենառազմականացված ու միաժամանակ ամենախաղաղասեր պետությունը: Քանի որ, եթե խաղաղություն ես ուզում, պետք է միշտ պատրաստ լինես պատերազմի:

Իսկ մենք, որ առիթը բաց չենք թողնում հպարտանալու մեր անցյալով, հասել ենք քսանմեկերորդ դար, վերջապես պետականություն ձեռք բերել ու, փոխանակ հզորանալու, ճահճի մեջ ենք խրվել, խեղճացել, փոքրացել, բարդույթավորվել...

Ո՞ւր մնաց մեր հպարտությունը:

Բայց, փառք Աստծո, գոնե քառօրյա պատերազմը ցույց տվեց, որ վերը հիշատակված գենը չենք կորցրել: Ու կրկին հպարտանալու առիթ ունեցանք: Հպարտացանք, որ չթողեցինք թշնամին իր մտքին դրածին հասնի: Բայց չէ՞ որ մենք էլ ոչ թե ձեռքբերում գրանցեցինք, այլ՝ կորուստներ: Ինչ խոսք, նաև արդարացիորեն հպարտացանք: Հպարտացանք մեր լուսավոր զավակների հերոսությամբ... Հետմահու...

Վե՛րջ: Այդպիսի հպարտություն այլևս չենք ուզում: Մենք այլևս չե՛նք կարող ցավից կսկծալ ու... հպարտանալ: Հպարտությունը, որքան էլ փառավոր ու հերոսական լինի, միևնույն է, մեր զավակներին հետ չի բերի: Գուցե այս պահին իմ մեջ ավելի շատ մայրն է խոսում, բայց չեմ կարող անկեղծ չլինել ու չասել, որ մեզ համար արդեն ամոթաբեր է հպարտության այս տեսակով պարծենալը: Եվ անիմաստ ու ցավալի են նաև մխիթարական խոսքերը: Սա այն դեպքն է, երբ բառերն իսկապես ավելորդ են: Որդեկորույս մոր վիշտը ո՛չ մի սփոփանք, ո՛չ մի ոգեշունչ գաղափար, թեկուզ ամենահայրենասիրականն ու վեհը, չի կարող ամոքել... Ու խոսքն օդում կախված է մնում, որովհետև մեղքի անտանելի զգացումը ծանրացել է ամենքիս ուսերին...

Հիմա լռելու պահն է: Լռելու, խնկարկելու, խորհելու, գործելու և շրջադարձային եզրահանգումներ անելու:

Գուցե ես անուղղելի լավատես եմ, բայց զգում եմ, որ այս ամենածանր գինը վճարելուց հետո պարզապես չի՛ կարող ու չպե՛տք է այսպես շարունակվի: Որովհետև կա մի սահման, որից այն կողմ արդեն նույնիսկ գենետիկ ամենաբացառիկ կոդը մեզ չի փրկի: Ինչպես Մոնթեն կասեր՝ «Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայ ժողովրդի պատմության վերջին էջը»:

***Նարինե ՍԱՆՈՅԱՆ***

# ՕԴԵՆՔԸՐՔԸ՝ ԲԱՂԴԻԿՅԱՆԻ ԴԵՐՈՒՄ

«Բարքլի նյուզ» լրատվամիջոցի տեղեկություններով, դերասան **Բոբ Օդենքըրքը** ներկայացնելու է Բարքլիի Կալիֆոռնիա համալսարանի լրագրության բաժնի նախկին դեկան և «Վաշինգտոն փոստ» թերթի մրցանակակիր վետերան խմբագիրներից Բեն Բաղդիկյանին «Փոստը» (The Post) վերնագրով նոր գեղարվեստական ֆիլմում, որը պատմելու է 1970-ականներին մեծ աղմուկ հանած «Պենտագոնյան թղթածրարների» հրապարակման գաղտնի մանրամասնությունների մասին: 4000 էջից բաղկացած կառավարական որոշումներ և 3000 էջի սահմաններում պատմական վերլուծություններ պարունակող այդ թղթածրարները բացահայտում են Մ. Նահանգների նպատակները Վիետնամի պատերազմի ժամանակահատվածում: Այդ պատերազմում 60 հազար ամերիկացի զինվոր սպանվեց, և 150 հազարն էլ վիրավորվեց: 1955-ից 1975-ը ավելի քան երեք միլիոն ամերիկացիներ ծառայել են Վիետնամում: Բաղդիկյանը իր ծանոթներից մեկից՝ Դանիել Էլսբերգից ստանալով այդ թղթածրարները՝ մեծ ջանքեր է գործադրել, որ «Վաշինգտոն փոստը» հրապարակի դրանց մի մասը 1971-ին, հակառակ այդ ժամանակվա Նիքսոնի վարչակազմի խոչընդոտներին և սպառնալիքներին: Էլսբերգին մեղադրել էին գաղտնի փաստաթղթերը գողանալու մեջ, բայց մեղադրանքները հանվել էին 1973-ին, իսկ փաստաթղթերը այժմ առցանց հասանելի են բոլորին: 2010-ին «Բանկրոֆթ գրադարանի» բանավոր պատմության կենտրոնի հրապարակած կենսագրական զեկույցում Բաղդիկյանը իր արարքը նմանեցնում է վերջին շրջանի վիքիլիքսյան բացահայտումներին: Այդ ժամանակ նա ասել էր խմբագրությանը, որ «եթե չհրապարակենք, խրախուսելու ենք կառավարությանը, որ նորանոր սխալներ գործի և գաղտնի պահի»:

Օդենքըրքը հիացել է Բաղդիկյանի հետևողականության և լրագրությանը նվիրվածության մասին կարդալով:

Բեն Բաղդիկյանը վախճանվեց 2015-ին: Ֆիլմը յուրահատուկ մեծարանք է նրա գործունեությանը:

# Հայկո Բաղդատը բեռլինյան բեմում զրահաբաճկոնով է

*Էրդողանի քիլլերների հետապնդող շունչը*



Բեռլինում ապաստանած էրդողանի քննադատ **Հայկո Բաղդատը** փողոց դուրս գալիս թիկնապահների ուղեկցությամբ է շարժվում, իսկ բեմում հայտնվում է զրահաբաճկոնով, երկյուղում է՝ էրդողանի երկար, պատժիչ ձեռքը հետևում է իրեն:

Շաբաթասկզբին գերմանական մի շարք լրատվամիջոցներ ազդարարեցին վերոգրյալը՝ անդրադառնալով 1976-ին Թուրքիայում ծնված մեր հայրենակցի՝ լրագրող, կատակերգու Բաղդատի գերմանական աքսորում էլ անդորր չգտած հոգեվիճակին: «Բիլդ»-ին տված հարցազրույցում Բաղդատը պատմել է, թե Թուրքիայում մի շարք դատավարություններ են սկսել իր դեմ, իր կարծիքով՝ էրդողանի նախաձեռնությամբ, ինչը անհնարին է դարձնում առաջիկայում իր Թուրքիա վերադարձը: Իսկ Գերմանիայում իրեն շատ էլ ապահով չի զգում, քանի որ, ըստ իրեն հասած տեղեկությունների, «զինված վարձու մարդասպանները հետևում են իրեն, և ինչ որ պահի կարող են սեղմել ձգանը»: Գերմանական «Ֆոկուսը» հիշատակելով «Բիլդի» հարցազրույցը, մեկնաբանում է, թե Եվրոպայում վարձու մարդասպանների թիրախում Թուրքիայից եվրոպական աքսորն ընտրած ալևի և հայ անձինք են: «Քանի որ ես թուրքահպատակ եմ, տեղեկությունը հայտնեցինք թե՛ թուրք պատգամավորներին, թե՛ գերմանացի պաշտոնատար անձանց,- մանրամասնում է Հայկո Բաղդատը և շարունակում,- անվտանգության աշխատակիցներն էլ հորդորեցին ինձ ելույթներիս ժամանակ զրահաբաճկոն կրել»:

***Անահիտ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա***

# ՄԵՔԵՆԱՅՈՎ՝ ՄԱՐՍ

Ամերիկյան SpaceX ընկերության հիմնադիր-ղեկավար Իլոն Մասկը փետրվարի 7-ին Falcon Heavy գերծանր հրթիռի միջոցով տիեզերք է արձակել Tesla էլեկտրական մեքենա:

Հայտնի է, որ 100.000 դոլար արժողությամբ կարմիր ռոդսթերի ղեկին գտնվում է տիեզերագնացի հանդերձով մանեկենը, որին Մասկը կոչել է Սթարմեն: Հետաքրքրական է, որ դեպի Մարս ուղարկված մեքենայի միկրոսխեմաներից մեկի վրա գրված է, որ «Սա պատրաստել են մարդիկ՝ Երկիր մոլորակի վրա»:

The Guardian-ը հայտնում է, որ էլեկտրական մեքենան շեղվել է սկզբնական ուղերթից ու այժմ Մարսի ուղեծրի փոխարեն շարժվում է դեպի Աստերոիդների գոտի:

Մասնագետների կարծիքով՝ այնտեղ հասնելուց հետո Tesla-ն կարող է բախվել որևէ երկնային մարմնի ու ոչնչանալ: Մինչդեռ ուրիշների համոզմամբ՝ մեքենան չի էլ հասցնի Աստերոիդների գոտի հասնել, քանի որ նախքան այդ կքայքայվի տիեզերական ճառագայթման հետևանքով:

Ամեն դեպքում՝ դեպի Մարս ուղղության համար ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփն իր թվիթերյան էջում շնորհավորել է Մասկին:

***Պատրաստեց՝ Հովիկ ԱՖՅԱՆԸ***

# ՈՒՄՈՐ

## ՈՒՄ ԳԱՆԳԱՏՎԵԼ

Ինչ-որ զրույցի ժամանակ Բեռնարդ Շոուին հարցրեին.

- Ո՞րն է ավելի ճիշտ՝ անհաջողությունների մասին ընկերներին պատմել, թե՝ թշնամիներին:

Շուուն պատասխանեց.

- Հոգսերի և ձախորդությունների համար պետք չէ պատմել ընկերներին: Ավելի ճիշտ է դրանց մասին պատմել թշնամիներին: Դրանով դուք բավականություն և հաճույք կպատճառեք նրանց, և, բացի այդ, համոզված եղեք՝ նրանք մեծ ուշադրությամբ կլսեն ձեզ մինչև վերջ:

## ՊԻԿԱՍՈՆ ԵՎ ԲԺԻՇԿԸ

Ֆրանսիացի նշանավոր մի բժիշկ մի անգամ Պաբլո Պիկասոյին ասաց.

- Որպես մարդու անատոմիայի հմուտ մասնագետ ես պնդել և ապացուցել եմ, որ ձեր նկարներում պատկերված մարդիկ բժշկական տեսանկյունից մեծ տարակուսանք են առաջացնում:

- Հնարավոր է,- հանգիստ պատասխանեց Պիկասոն:- Սակայն ես կարող եմ վստահաբար ձեզ ասել, որ իմ կերպարները ավելի երկար են ապրելու, քան ձեր հիվանդները:

## ԳԱՂՏՆԻՔ

- Կա մի գաղտնիք, որ տղամարդը դժվարությամբ է կարողանում պահպանել,- մի անգամ ասել է Մարկ Տվենը և, չսպասելով հարցին, շարունակեց,- այդ նրա կարծիքն է ինքն իր մասին:

## ՎՐԵԺ

Նշանավոր դիրիժորի համերգի ժամանակ Բերնարդ Շոուն շշուկով խոսում էր հարևանուհու հետ և բարձրաձայն ծիծաղում: Դիրիժորը չդիմացավ և զայրացած գոռաց.

- Դուք վատ եք դաստիարակված, ես Ձեր կատակերգությունը դիտելիս երբեք չեմ ծիծաղում:

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

Մարկ Տվենին հարցրեցին.

- Ինչպե՞ս են գրվում բարձրարժեք գրքերը:

- Օ՜, դա հասարակ բան է,- պատասխանեց գրողը: Դրա համար հերիք է, որ ունենաք թուղթ ու գրիչ և առանց մեծ ջանքերի գրեք այն, ինչ որ կփչի ձեր գլխին: Դժվարությունը այն է միայն, թե ինչ կփչի ձեր գլխին:

## ԼԱՎ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Բեռնարդ Շոուին հարցին, թե որ ժամանակներում կուզենար ապրել, եթե հնարավորություն ունենար ընտրելու:

- Ֆրանսիայում, Նապոլեոն Բոնապարտի ժամանակներում,- առանց հապաղելու պատասխանեց Շոուն:

- Ինչո՞ւ,- զարմացավ հարց տվողը:

- Որովհետև, հարգելի բարեկամ, այն ժամանակ միայն մեկ մարդ էր կարծում, որ ինքը Նապոլեոնն է:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հայտարարում է մրցույթ «ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր տեղի համար:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական կազմակերպություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տիպային (օրինակելի) կանոնադրության 21-րդ կետի, կազմակերպության տնօրենի թեկնածություն առաջադրելու իրավունք ունեն կազմակերպության գիտական անձնակազմը, համապատասխան բաժանմունքի բյուրոն և կազմակերպության գիտական գործունեությանը համապատասխանող մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ անդամները, որոնք կարող են առաջադրել միայն մեկ թեկնածու: Տնօրենի թեկնածուն պետք է ունենա գիտական աստիճան, ընտրության պահին լինի 65 տարեկանից ցածր տարիքի, ունենա գիտակազմակերպչական աշխատանքի փորձ, մասնագիտական ուղղվածությամբ պետք է համապատասխանի գիտական կազմակերպության հիմնական գիտական ուղղություններից մեկին:

Առաջադրված թեկնածուները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում
2. Առաջադրումը հաստատող փաստաթուղթ
3. Լուսանկար
4. Քաղվածք աշխատանքային գրքույկից
5. Ինքնակենսագրություն
6. Բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն
7. Գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն
8. Գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում)
9. Հրատարակված աշխատությունների և հոդվածների ցանկ
10. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
11. Տեղեկանք մշտական բնակության վայրից
12. Բնութագիր վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել)
13. Կազմակերպության զարգացման ծրագիր
14. Անձնագրի և սոց. քարտի պատճենները:

Թեկնածուների հիմնավորված առաջադրումները վերոնշյալ փաստաթղթերի հետ մեկ ամսվա ընթացքում (հայտարարության հրապարակման օրվանից) խնդրվում է ներկայացնել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք հետևյալ հասցեով՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24, հեռ. 52-13-62:

***ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը հայտարարում է մրցույթ հոգեբանության ամբիոնի դասախոսների հինգ թափուր տեղերի համար՝ 0,5 դրույքով:

Մրցույթին կարող են մասնակցել ՀՀ այն քաղաքացիները, որոնք ունեն

& հոգեբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան,

& մանկավարժական աշխատանքի առնվազն հինգ տարվա փորձ:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում
2. Կադրերի հաշվառման անձնական թերթիկ
3. Ինքնակենսագրություն
4. Անձնագրի և սոցիալական քարտի պատճենները
5. Դիպլոմների պատճենները (բուհ, գիտության թեկնածուի կամ դոկտորի)
6. Հրատարակված աշխատությունների ցանկ:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից) ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի կադրերի բաժին:

Հասցեն՝ Երևան, Մ. Բաղրամյան պող. 24, հեռ. 52-70-51:

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 21.02.2018 թ.:

**"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА**